



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատմենել և տարածել եյուրը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևս եյուրը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

№ 2 ՀԱՅՔՆԱԿ-ԿՈՌՄԻՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

1 սերիա. կազմակերպչական յեկ պրակտիկ խնդիրների

S. ՆԵՐՍԻՍՅԱՆ




ԲՆԱԿՑԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿՈՂՊԵՐԱՑԻԱՅԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ
ՀԱՄԱԴՐՈՏ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

—

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐԵՎԱՆ-1930




№ 2 ՀԱՅԲՆԱԿ-ԿՈՌՄԻՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2
1 սերիա. կազմակերպչական յեկ պրակտիկ խնդիրների

S. ՆԵՐՍԻՆՅԱՆ

334.1

ԲՆԱԿԹՆԱՐԱՐԱԿԱՆ ԿՈՂՊԵՐԱՑԻԱՅԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ
ՀԱՄԱՐՈՏ ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐԵՎԱՆ - 1930

Հրատ. № 1242

Գրառել. № 4059 (բ) Պատ. № 271 Տիրաժ 3000

Գետհրատի Յերկրորդ Տպարան Յերևանում

1. ԹՆԱԿՐԹՆԵՑԻՆ ՑԽՆԱԿՐՄԱԽԹՅՈՒՆ ԸԵԼ ԹՆԱԿՐՄԱՆԵՑԻՆ
ԿՈԶՊՆԲԱՑԻԱՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՔՆԵՐԸ.

Բնակարանային կոռուպերացիան, ինչպես վողջ Միտթլան մեջ, նույնպես և Հայաստանում բոլոր կոռուպերատիվ սխստեմներից ամենալերիտասարդն ե. չնայած դրան նա իր կարողությամբ ու նշանակությամբ բավական լուրջ տեղ և դրավում ժողովրդական տընտեսության մեջ, Բնակարանալին կոռուպերացիալի առաջ դրված խնդիրները յերկրի ժողովրդական տնտեսության վերակառուցման շրջանում առանձնահատուկ նշանակություն են ստանում:

Աշխատավորական մասսայի բնակարանային կարիքի ու բնակարանային կոռուպերացիայի կարևորության խնդիրն իր արտահայտությունն ե գտել կոռուսակցության բարձրագույն որդանների վորոշումների մեջ: Համեմկոմկուսի 13-րդ համազումարի բանաձեկի մեջ կոնկրետ կերպով ասում ե հետեւյալը.

«Բանվորական նկութական կացության կարևոր խնդիրը, ամենից առաջ հանդիսանում ե բնակարանային կարիքը, վորը կարող ե ճիշտ և արագ լուծում ստանալ վոչ միայն պետության միջոցներով ու ոգոնությամբ, այլ ազգաբնակչության իրեն ինքնազործունեյության և (բնակարանալին պահանջի) նյութական մասնակցությամբ: Ամենալավ ձեն ալգակիսի ինքնազործունեյության և բնակարանային պահանջի մեղ-

մացման հանդիսանում և բնակարանային կոռպերացիան։ Թեև անվիճելի յե այն փոստը, վոր 1924 թ. սկսած մինչև 1930 թիվը հսկայական արագությամբ և կատարվել բնակարանային շինարարությունը, այնուամենայնիվ շնորհիվ յերկրի տնտեսական ու կուլտուրական առաջադիմության, քաղաքի աշխատավորական զանգվածների թիվը որսարե ավելանում ե. դրա հետ միասին ավելանում ե նաև բնակարանային պահանջը։ Համկոմկուաթի կենտկոմի դիրեկտիվը 24/6 1924 թվի առաջարկում և ձեռնարկել հետեւյալ միջոցները։

«Ըստ բնակարանալին կոռպերացիայի զարդացմանը, պետք և ձգտել վոր բոլոր բանվորական բնակարանալին շինարարությունը կատարվի բնակարանային կոռպերացիայի մասնակցությամբ։ Բնակարանային կոռպերացիայի ձևերի հիմնական առավելությունը կայանում և հետեւյալում։

ա) Ուժեղացնել և զարգացնել բանվորական լայն մասսաների նախաձեռնությունն ու նրանց մասնակցությունը կազմակերպելով բնակարանալին ընկերություններ։

բ) Նյութական մասնակցություն բնակարանային կոռպերացիայում փայտվճարներով ու կառուցման մեջ ներդրվելիք տոկոսային մասնակցությամբ։

գ) Ստեղծել բարենպաստ պայմաններ կուլտ-կենցաղային աշխատանքների համար։

դ) Ամենալավ և խելացի կերպով շահագործել իւրենց տրամադրված շենքերը և հոգատար ու խնամքով պահպանել բնակարանալին ֆոնդը։

ե) Բնակարանային ավելի եժան կառուցում հա-

մեմատած բնակարանալին այլ շինարարությունների հետ:

զ) Պետական ստացված գումարների ժամանակին ու աղանային վերադարձում:

Չնայած ինչպես կուս. համագումարի, նույնութեա և կենտկոմի գիրեկտիմների մեջ պարզ կերպով ասվում է այն մասին, թե ինչ խնդիրներ ունի բնակարանային կոռպերացիան և ինչ մասնակցություն պետք է հանդիս բերեն աշխատավորական լայն զանգվածները, այնուամենայնիվ մեզ մոտ՝ Հայաստանում բնակարանային կոռպերացիան դեռ չի ընդգրկել աշխատավորական լայն զանգվածներ։ Դա բացատրվում է մասսամբ նրանով, վոր բնակարանային կոռպերացիայի նշանակության, նրա սկզբունքների, գործունեյության ու նվաճումների մասին լուրջ աշխատանք չի տարվել։ Այժմ, յերբ բնակարանալին կոռպերացիայի շինարարական աշխատանքն որըստորե ուժեղանում ե, անհրաժեշտ ե ծավալել ու խորացնել բացատրական աշխատանքը։

Բնակելումիությունն ալժմ իր գործնական անելիքների հերթական ու հիմնական խնդիրներից մեկն և համարում կոռպերացիայի գաղափարների լայն մասսայականացումը և ձեռնարկել ե այդ ուղղությամբ սիստեմատիկ գրականության հրատարակությանը. մատչելի, պարզ փոքրիկ բրոցուրների մի փոքրիկ սերիա, վորը հնարավորություն կտա մեր աշխատավորությանը մոտիկից ծանոթանալու ալդ կազմակերպության սիստեմի հետ։ Այս բրոցուրը, վորի մեջ կարճ կերպով շոշափվում են բոլոր կարեոր խնդիրները կազմված ե հապճեալ կերպով, անշուշտ զերծ չե-

խոշոր թերություններից՝ սակայն նա առաջինն և և
մեզ թվում ե, վոր նա կարող ե ընդհանուր ըմբռնում
տալ կոռպերատիվ այդ սիստեմի մասին:

**2. ԻՆՉՈՒՄՆ Ե ԿԱՇԱՐԱԿԻՄ ԱՇԽԱՑԱՎՈՐՄԿԱՆ ԼՅՈՒ ԶԱՆԴՎԸՆ-
ՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԿՄԱՆԱՌԵՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ
ԳԱՅԵՊԱՆՄՅՆ ԽՆԴՐՈՒՄ**

Վորպեսդի աշխատավորությունը մասնակից լին-
սի բնակարանային տնտեսության զարգացման, ան-
հրաժեշտ ե, վոր բնակարանային տնտեսությունն ամ-
բողջապես հանձնվի հենց իրենց բնակվողների պա-
տասխանատվության: Մինչև այժմ փորձը ցույց ե
տվել, վոր բնակելի շենքերը տեղական իշխանության
գույքը համարելով բնակիչներն իրենց պատասխանա-
տու չեյին համարում շենքի պահպանման համար և
կատարյալ ինդեֆերենտ վերաբերմունք եյին ցույց
տալիս. մյուս կողմից՝ բանվորներն ու ծառայողներն
իրենց տված բնակարանային վարձով չեյին կարող
շենքի հիմնական դրությունը պահպանել, այսինքն ըս-
տացվող յնկամուտը չեր ծածկում շենքի պահպանջված
ծախսերը և այդ պատճառով տեղական քաղխորհուրդ-
ները, վորոնց գույքն եր համարվում այդ շենքերը,
սակայն իրենց բյուջեները խախտել և այդ գու-
մարներից արամադրել շենքերի պահպանման: Այդ-
պիսով բնակարանային Փոնդի պահպանման համար
հսկայական գումարներ եյին ծախսվում, սակայն շեն-
քերը դարձյալ գտնվում եյին անմիտար վիճակի մեջ.
որինակ՝ Յերևանի քաղխորհուրդը 3-4 տարվա ընթաց-
քում կառուցեց 13—15 նոր շենքեր 2 միլիոն ռուբլու
արժողությամբ, վորի դիմաց մինչև շենքերի վերջնա-

կան մաշվելը, այսինքն 60—70 տարվա ընթացքում՝
ըստ սահմանված որևէնքների, ստացվում եր քնակվարձ
ծախսի 60—70%, իսկ մնացածը պետք ե հոգար այլ
յեկամուռներից, Յերբորդ մոմենտն այն ե, վոր մեզ
մոտ՝ Հայտատանում, գլխավորապես Յերեանում, վոր-
տեղ շենքեր կառուցված են մեծ մասամբ ցեխից և
հում աղյուսից, չունի կանոնավոր կոյտղի և ջրմուղ,
բաց առուներով հոսող ջրերը և կոլուղու բացակայու-
թյունը խոշոր չափերով պատճառ ե դառնում շենքե-
րի շուտափույթ քայքալման և պահանջ և դնում շեն-
քերի պահպանման համար ավելի մեծ գումարներ
ծախսելու, մինչդեռ մեզ մոտ գոյություն ունեցող բը-
նակարանային վարձը շատ հեռու յե ալդ ծախսերի
ծածկման գումարից. 1 քառ. մետրին պահանջվում ե
տամսական 30-35 կոպեկ և զրա դիմաց վարձն ստաց-
վում ե 20—25 կ. և ալդ զեֆիցիտն աստիճանաբար
նվազեցնում ե գոլություն ունեցող բնակարանալին
ֆոնդը:

Այդ բոլորից լենելով, բնակարանալին տնտե-
սությունը պետք ե հանձնել աշխատավորական զանդ-
կածների ողտագործման ու պահպանման, մացնելով
նոր ձևեր տնտեսական ալդ ճյուղի ոգտագործման մեջ։
Այդ դեռ բավական չե։ Պետք ե հանդես բերել ու գար-
գացնել աշխատավոր մասսաների ինքնագործունելու-
թյունը, նրա անմիջական նյութական մասնակցությու-
նը բնակարանալին շինարարության գործում։ Այժմ,
լերը մեր կուսակցությունն ու պետությունն իրենց ա-
ռաջն են դըել յերկը սոցիալիստական վերակառուցա-
ման հիմնական խնդիրը, բնակարանալին շինարարու-
թյան տեմզը պետի ուժեղացնել մասսաների ֆինան-

սական մասնակցությամբ և դա հնարավոր և միայն
այն դեպքում, էերը աշխատավորության լայն դաշնո-
վածները համախմբվեն բնակարանալին կոռպերացիա-
լի շուրջը:

3. ԲՆԱԿԱՐԵՆԵՑԻՆ ԿՈՌՊԵՐԱԾԽԱԾԻ ԶԵՎԵՐՆ ՈՒ ՍԿՃՐՈՒՆՔՆԵՐԸ

Բնակարանային կոռպերացիան հայտառանում է
տարի յե, վոր գոլություն ունի և նա հնարավորու-
թյուն չի ունեցել լայն դաղափար տալու աշխատավո-
րական մասսաներին կոռպերացիալի ալդ սիստեմի սա-
սին. այդ պատճառով բանվորներից և ծառալողներից
շատ շատերը բոլորովին տեղյակ չեն նրա սկզբունք-
ների ու ձեերի հետ և շատ դեպքերում ընդունում են
վորպես բնակարանալին բաժին կամ մի շինարարա-
կան որգան. պահանջում են իրենց բնակարան տալ
կանխիկ դրամով, յենթադրելով, վոր բնակարանները
կառուցվում ու վաճառվում են բնակարանային կոռ-
պերացիալի կողմից: Այդ թիուր ըմբռնումը բղխում է
նրանից, վոր կոռպերացիայի այդ սիստեմի պարզա-
բանման համար մինչեւ ալժմ մեր մամուլում շատ քիչ
տեղ և տրվել, պրոֆիեսիոնալ որգանները քիչ են ըզ-
րաղվել այդ խնդրով և բացակալել և պահանջված գը-
րականությունը:

Բնակարանային կոռպերացիան ընդգրկում է 3
տիպի բնակարանային կոռպերատիվ ընկերություն-
ներ.

1) Բանվորական բնակարանային շինարարական
ընկերություն (բնակչին կոռպ ընկերություն).

2) Բնակարանային վարձակալական ընկերու-
թյուն (բնակվարձկոռպ).

3) Հռամաքաղաքալին բնակչինարարական կոռպերատիվ ընկերություն (Համ. քաղ. բնակչինկոռպ):

Բնակչինկոռպ ընկերություններ կազմակերպվում են արդյունաբերական ձեռնարկներին և պետական ու հասարակական հիմնարկներին կից: Ընկերության հիմնական նպատակն ե բարելավել իր անդամների բնակարանային պայմանները: Մինչև այժմ ընակչինկոռպներն ունեցել են 2 տիպի ընկերություններ՝ բանվորական և ծառայողական: Բանվորական համարվում են այն ընկերությունները, վորոնց անդամների 60 տոկոսը բանվորներ են (վորոնց թվում և առաջ քաշված պատուխանատու նախկին բանվորներ), ծառայողական ընկերություն կոչվում և այն ընկերությունը, վորի 50 տիկոսից ավելին կազմում են ծառայողներ: Այդ լերկու տիպի ընկերությունների տարբերությունը կայանում ե նրանում, վոր բանվորական ընկերությունները նախնական փայտվճարներ մուծում են 10 տոկոսով, իսկ ծառայողներին՝ 15 տոկոսով, վորի վրա հետագայում մանրամասն կանգ կառնենք: Բնակչինկոռպը ընկերությունները կազմակերպվում են հավաքականորեն, այսինքն տարբեր հիմնարկություններից համախմբվելով կազմակերպում են մի առանձին ընկերություն: Ընկերությունն որինական կարող է համարվել լեթե նա ունենա վոչ պակաս, քան 25 անդամ: Ընկերության կազմակերպչական ժողովում ընարվում ե վարչություն և վերստուգիչ հանձնաժողով, քննվում ու հաստատվում ե կանոնադրությունը վորոշվում և փայտվճարների չափը, ընկերության անունը և բնակչությունը կտրող ե գոյություն ունենալ ա-

ռանց բնակեղողմիության անդամտգրվելու, սակայն այդ գեղքում նա չի ոգտվում բնակեղողերացիալի վը-
րա տարածվող արտօնություններից: Ընկերության
կազմակերպումից հետո անդամագրվում և տոմարա-
գրվում են բնակեղողմիության ցանցում, վճարում են
բնակեղողմիության համապատասխան գումարովմուտ-
քի վճար և վարկավորվում են կոմմունալ բանկի կող-
մից, ըստ բնակեղողմիության կողմից բաշխվելիք
վարկերի քանակի, ներկալացնելով վաղորոք իրենց
անդամների բնակարանային պահանջի չափը:

Բնակեղողմ միությանն անդամագրվելիս վճա-
րում են փայտվճար և վարկավորվելու իրավունք են
ձեռք բերում, բացի այդ վճարում են նաև փայտվլ-
ճարների 25 տոկոսը բնակեղողմիությանը և լիազո-
րում են տվյալ ընկերության անունից վարկ ստանա-
լու և կառուցելու նրանց պահանջած շենքը:

4. ԲՆԱԿԹԻՆԿՈՂԴԻ ՑՈՒՐԾԵՆՉՅՈՒԹ ԸՆԴԱՄԻ ՊԵՏՑԱԿԱՆՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐ

Բնակշինկողողմ ընկերություն կազմակերպելուց
հետո, նոր անդամներ ընդունվում են ընկերության
ընդհանուր ժողովի վորոշմամբ և ընկերության յու-
րաքանչյուր անդամ անդամության իրավունք և ձեռք
բերում միայն այն ժամանակ, լեռը նա մուծած կլի-
նի 5 ռ. մուտքի վճար: Մուտքի վճարից բացի ամեն
մի անդամ վճարում ե նաև փայտվճար, մաքսիմում
50 ռ., իսկ ավելին կարելի յե միայն ընկերության
ընդհանուր ժողովի վորոշմամբ: Վերջին 50 ռուբլին
վճարվում ե բնակեղողմիության վաղորական ժողովի
վորոշված ժամանակամիջոցում: Այդ դեռ չի նշանա-

կում, վոր նա կարող ե ընակարան ստանալ. ընակարան ստանալու համար պետք ե մուծել պահանջվելիք սենյակի արժեքի 10—15 տոկոսը: Ընկերության վարչությունն իր անդամների պահանջն ամփոփելով հայտնաբերում ե կառուցվելիք շենքի ծավալը, արժեքը և պայմանագործում ե ընակկոռապմիության վարչության հետ: Պատրաստի ունենալով տոաջին տարվա կառուցվելիք սենյակների թվի ընդհանուր արժեքի 10—15 տոկոսը՝ վորպես սեփական միջոց, ընկերությունն իրավունք կունենա վարկ ստանալու:

Եենթադրենք ընկերությունն ուզում ե այս գարնանը շենքի կառուցումն սկսել, ստանում ե յուրաքանչյուր անդամից պահանջը, որինակ՝ մեկը պահանջում է 2 սենյակից իր հարմարություններով, 3 սենյակից վաննայով, մեկ սենյակ իր հարմարություններով և այլն. այդ սենյակների մոտավոր արժեքը կվորոշի ընակկոռապ միության վարչությունն ըստ կառուցվելիք շենքի նյութերի, որինակ՝ մինչեւ այժմ ընդունված ե յեղել 1 սենյակի միջին արժեքը 3,500-ից մինչև 3,800 ռ. 1929 թ. կառուցված շենքերում վոչ տվելի քան 3,000 ռ., սակայն դա կպարզվի իհարկե կատարողական նախահաշիմները կազմելուց հետո:

Այսպիսով մեկ սենյակ ստացող բանվորական ընկերության անդամը մեկ սենյակի համար պետք ե վճարի 10 տոկոսը—300 ռուբլի, ծառալողական ընկերության անդամը 15 տոկոսը—450 ռ. 2 սենյակ իր հարմարություններով սաացողը՝ 600 ռ., ծառայողը՝ 900 ռ.: Ինչ ժամկետներով պետք ե մուծել այդ գումարները: Մինչեւ այժմ, քանի դեռ կոռպերացիան լայն մասսայականություն չեր վայելում, ընակկոռապմիու-

թյունն ստիպված եր իր սեփական միջոցները ցուլց
տալ վորպես ընկերության սեփական միջոց, վարկեր
ստանալ շենք կառուցել և հանձնել ընկերության, իսկ
դա հետագայում ստեղծում եր շենքում ապրողների
համար նախնական փայտվճարների մուծման դժվա-
րին պարմաններ, քանի վոր շենքում ապրելուց հետո
նրանք փայտվճարների հետ միասին պետք ե վճարեն
նաև շենքի արժեքը, վորը հաշվվում և բնակվարձ:
Այդպիսով կրկնապատկվում եր մուծելիք գումարը և
անդրադառնում տշխատավորի բյուջեյի վրա, իսկ այժմ,
յերբ բնակկոռպերացիան բավական մասսայականացել
ե, աշխատավոր մասսան զգում և ու գիտակցում բը-
նակկոռպերացիայի կարեռությունը և խոշոր չափով
մեծացել ե բնակկոռպերացիայի անդամների բնակա-
րանների պահտնջն ու նկատվում ե ակտիվ ֆինան-
սական մասնակցություն. բնակկոռպմիությունն ար-
դեն նորմալ հիմքերի վրա յե դրել ընկերությունների
տոկոսների մուծման խնդիրը:

Ընկերությունները կազմակերպվելուց հետո ի-
րենց անդամների պահանջի համապատասխան սենյակ-
ներ են ստանում այն դեպքում, յեթե նրանք արդեն
պատրաստի կունենան մուծելիք տոկոսների լրիվ գու-
մարը և յեթե բնակկոռպ միության դժով ստացվող
վարկային գումարները հնարավորություն կտան լրիվ
չափով բավարարել ալդ ընկերության պահանջը: Այդ
անելու համար ընկերությունը կազմակերպելիս չպետք
ե սահմանափակի ընկերության անդամների թիվը,
պետք ե աշխատի, վորքան կարելի լե շատ անդամներ
ունենալ: Այդ դեպքում շատ անդամներից քիչ գու-
մար գանձելով հնարավորություն կտեղծվի պահանջ-

վող քանակութիւնամբ սեփական միջոցներ ցուց տալ
ու վարկ ստանալ: Որինակ՝ յեթև ընկերությունն ու-
նի 120 անդամ և տմհն տնդամ ամսական մուծում և
10-ական ոռութիւն, աշնան սկզբից սկսած մինչև գա-
րուն, ասենք 7 ամսում 8,400 ռ. նա կանխիկ գումար
կունենա, վորով կարող ե վարկ ստանալ 80-90 հաղար
ոռություն սահմաններում, այսինքն՝ 25-ից 30 սենյակի
արժեքի չափով:

Ալգորիտմ 2-3 տարվա ընթացքում, ընկերու-
թիւն բոլոր անդամները բնակարաններ կստանան:
Դրա առավելությունն այն և, վոր առաջին տարում
բնակարան չստացողները հավասար գումար տալով
հնարավորություն են ստեղծում իրենց 20 անդամնե-
րին բնակարաններ ստանալու, վորոնց վրա չի ծան-
րաբեռնվում ամբողջ բնակարանի արժեքի մուծման
գումարը և հետագա տարիներում բնակարան ստա-
ցողները նույնպես մուծում են չստացողների համար
և այդպիսով վոխադարձ ոգնությամբ ըոլորն ել մի-
տեսակ մուծումներ կատարելով, անդգալի է դառ-
նում տոկոսների մուծումը և ստեղծվում ե դյուրին
պայմաններ առաջին հերթին բավարարել բնակարա-
նային վատթար պայմաններում ապրող անդամներին,
2-րդ՝ այդ ձևը հնարավորություն և աալիս նույնիսկ
ամենացածը աշխատավարձ ստացողին բնտկկոռպե-
րացիայի անդամ լինելու: Մինչև հիմա ընկերություն-
ները շատ հաճախ դեռ շենքը չկառուցած բնակարա-
նի բաշխում են կատարում տվյալ ընթացիկ տարում
բնակարաններ են տալիս, պարտավորեցնում են, վոր
նա կատարի մեկ տարվա ընթացքում պահանջվող գու-
մարի մարումը, իսկ չստացողները հրաժարվում են

մուծումներ կատարելուց մինչև հետագա սարում նը-
րանց բնակարանների կառուցումն սկսելը:

Բնական ե, վոր այս դեպքում ցածր աշխատա-
վարձ ստացող բանվորը կամ ծառայողը բնակարան
չի ստանա, վորովհետեւ 7 ամսվա կամ 1 տարվա ըն-
թացքում 600-ից մինչև 900 ռուբլի մուծել չի կարող,
ինչպես առաջին տարում բնակարան ստացողները չը-
կարողանալով մուծել պահանջվող գումարը իրավունք
չեն ունենա վարկեր ստանալու, վորովհետեւ կոմմու-
նալ բանկն ունեցած սեփական միջոցների չափով և,
վոր նըրանց վարկ ե բաց անում, այսպիսով այն վո-
րոշումը, վոր կուս և խորհրդակին որդաններն ունեն
այն մասին, վոր բնակկոռպերացիայի գծով կատար-
վող բնակարանային շինարարության բնակարանների
85 տոկոսը պետք ե տրամադրվի բանվորական ընկե-
րություններին, դժվար կլինի իրազործել:

5. ԽՆՉԳԵՑ ՊԵՏՔ Ե ԿԱՑԱՐՁՎԱԾԻՆ ԲԱՑԽՈՒՄԸ

Ընկերությունը շենք կառուցելու համար պետք
է պայմանագիր կնքի հողամասի համար և սեփական
միջոցների հիման վրա կոմմունալ բանկից վարկի
պայմանագիր կնքելուց հետո, շենքը հանձնարարում
է բնակկոռպ միության կառուցելու: Կառուցման ըս-
կըզրից ընկերությունը կատարում է իր անդամների
բնակարանային դրության ուսումնասիրություն. բնա-
կարանների բաշխման ընթացքում պետք ե հիմք ու-
նենալ հետեւալ սկզբունքները՝ 1) կոռպերատիվ ստաժ,
2) մուծած գումարի չափը և մուծման աստիճանը,
վերջինս պետք ե ի նկատի ունենալ նըրա համար, վո-
րովհետեւ լինում են գեպեր, յերբ մեկը մուծում է 5

սուբլի և սպասում ե մինչև շենքը պատրաստ ե լինում և պահանջում ե միանգամից մուծել 900 ռուբլի: Յերբեմն այդպիսիներն ոգտվում են հիմնարկությունների լայլ վերաբերմունքից և վերջինները մուծում են պահանջված զումարը: Դա խախտում ե կոռպերացիայի սկզբունքը, դրա համար բաշխման ընթացքում պետք ե հաշվի առնել այն գումարը, վոր նա մուծել ե ընդունման որից աստիճանաբար: 3) ընակարանալին պայմանները, ընտանիքի անդամների թիվը և հասակը, 4) սոցիալական դրությունը:

Այս 4 սկզբունքներից յելնելով, վարչությունը բաշխումը կատարում ե, վոր դրվում ե ընկերության ընդհանուր ժողովի հաստատման և այդ բաշխումը և վոչ մի զեղքում յենթակա չե փոփոխման այնքան, վորքան ավյալ անդամն զբաղեցնում ե ընակարանը: Բայց քանի վոր մեր ընակարանալին կրիզիսի պայմանները հնարավորություն չեն տալիս պահանջված նորմայով ընակարան որամադրել յուրաքանչյուր անդամին, լինում են դեպքեր, վոր ընկերության անդամները շատ վատթար պայմաններում գտնվելու հետևանքով ընկերության ընդհանուր ժողովի վորոշմամբ մի ընակարան տալիս են անդամներից մեկին և նրա մեկ սենյակը տեղափորում են ժամանակավորապես մի այլ անդամի, մինչեւ հետագայում նըա համար ընակարան կտուցելուց հետո փոխադրվում ե և սենյակը մնում ե նույն անդամի արամադրության տակ: Յուրաքանչյուր անդամին տրված ընակարանն ոգտագործում ե զբաղեցնողի հայեցողությամբ: Ընկերության ներքին կանոնադրության սահմաններում և ամեն մի անդամը պարտավորվում ե իրեն զբաղեցրած

բնակելի տարածության համար կոմմունալ բանկից վերցրած վարկը մարել իր միջոցներով հետեյալ կար գով.

Ընկերությունը վարկ ստանալու ժամանակ պայմանագիր ե կնքում կոմմունալ բանկի հետ և տալիս ե ստացվելիք վարկերի գումարի չափով մուրհակներ 60 տարի ժամանակով։ Շենքի կառուցումից հետո կատարողական նախաճաշվի հիման վրա հայտարերում ե յուրաքանչյուր քառ. մետրի արժեքը, վորոշվում ե յուրաքանչյուր անդամի զբաղեցրած բնակաբանի ընդհանուր արժեքն ըստ զբաղեցրած տարածության։ Այդ գումարից դուրս գալով այն նախնական փայտվճարը, վոր նա վճարել ե (600-ից 900 ռուբլի), իսկ մնացած գումարն առաջին 3 տարին տալիս ե 2 տոկոս, 2-րդ յերեք տարին տալիս ե 1 տոկոս վարկերի տոկոսներից և արժեքը բաժանելով մնացած տարիների վրա, հայտարերելով տարեկան և ամսական մուծելիք գումարի չափը, վորոշվում ե մուծելիք տոկոսի և վարկերի մարման չափը։ Դրանից զատ՝ ընկերության վարչությունը կամ բնակելումիությունը վորոշվում են յուրաքանչյուր քառ. մետրի վրա կատարվող շահագործման ծախսը և պարզում են ամսական մեկ բնակվողի կողմից, ըստ նրա զբաղեցրած տարածության շահագործման համար մուծելիք գումարի չափը. վերջինս կիրառվում ե որենսդրական կարգով։

Այդ յերկուսի միացումով ստացվում ե մի բնակվողի ամսական վճարվելիք գումարի չափը։ Այսովուառվ բնակչին կուպի յուրաքանչյուր անդամը 60 տարվա ընթացքում իր վճարումներով մի կողմից հոգում և շենքի պահպանման ծախսերը, մյուս կողմից մա-

բում և ստացված վարկալին գումարները և շենքը 60 տարուց հետո մնում և ընկերության լիակատար սեփականությունն Բնակարանն զբաղեցնելուց հետո ընկերության անդամի տրամադրած տարածության սահմաններում, նա իրավունք ունի վարչության հետ համաձայնեցնելով իր բնակարանում ապրեցնել իր ուղած մարդուն կամ կարող և իր յերկու սենյակներից մեկը տրամադրել վորեև մեկին ժամանակավորապես ոգտագործելու, բայց այդ նա կարող ե մեկ կամ միքանի տարով քաղաքից բացակայելու դեպքում կամ բնակարանը փակել կամ տալ մեկ ուրիշին ոգտագործելու մինչև իր վերադարձը, Ընկերության անդամը մահանալուց հետո, նրա իրավունքներն անցնում ե չափահաս ժառանգության, Ընկերության անդամն իր կամքով կամ զանազան պատճառներով Ընկերության կողմից գուրս գալուց հետո, չի կարող ողտվել Ընկերության նույն շենքի բնակարանից, այդ դեպքում նա կորցնում է այն ճ ոռւթին, վոր մուծել ե մուտքի վճար և Ընկերությունից կտրող և ստանալ կանխիկ իր մուծած 50 ռ. փայտվճարը և շենքի արժեքի նախնական տոկոսները, վոր նա մուծել ե. սակայն այդ բոլորը կարող ե ստանալ Ընկերության 6-ամսյա կամ տարեկան հաշվեկշիռը կազմելուց հետո:

Վոր դեպքում անդամը կարող է զրկվել կռոպես բատիկ անդամի իրավունքներից.

ա) Յեթե նա դատարանի կամ տեղական իշխանության կողմից զրկվում է ձայնի իրավունքից:

բ) Յեթե նա հրաժարվում է սիստեմատիկորեն վարկերի մարման և շահագործման ծախսեր վճարելուց:

գ) Յեթե նա իր վարքով կամ գործունելությամբ

փոխանակ բնակկոռպերացիայի դարդացման նպաստելու, խախտում և ընկերության վարչության կոռպերատիվ խորհրդականին դիրեկտիվ որպանների վորոշումները, վորի հետևանքով տուժում և ընկերությունը:

Բնակարանային շինարարական կոռպերատիվ ընկերություններ ստեղծելու նորատակն ինչպես վերեվում ասացինք, այն և, վոր մի կողմից անհատների կոլեկտիվ մասնակցությամբ զարդանում և բնակարանային շինարարությունը, մյուս կողմից կոլեկտիվ փոխադարձ ոգնությամբ և պետության ոժանդակությամբ ստեղծվում և նոր կենցաղին համապատասխան բնակարանային պայմաններ և բացի այդ բնակարանային կոռպերատիվ ընկերությունների շենքերը պետության կողմից ոգտվում են մի շարք արտոնություններով, ինչպիսին ե՛ բնական, նորարարական, սանիտարական և տեղական զանազան հարկերը:

6. ՎԵՐՋԱԿԱԾԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԽՎԵՐՆ ՈՒ ՍԿՃՐՈՒՆՔՆԵՐԸ

Վարձակալական ընկերություններ կոչվում են այն ընկերությունները, վորոնք կազմակերպվում են քաղխորհուրդների կամ արդյունաբերական ձեռնարկների տրամադրության տակ յեղած շենքերի բնակվողների կողմից: Շենքերում բնակվողները կազմակերպելով բնակվարձկոոպ ընկերություն 12—24 տարի կապալով վերցնում են վերոհիշված շենքերը, վորոշ վարձագին տալով գուլքատերերին, վարձաշափը լուրաքանչյուր շենքի նկատմամբ վորոշվում է գույքատիրոջ և վարձկոոպի վարչության փոխադարձ համաձայնությամբ: Վարձակալական ընկերության տն-

դամը կարող են լինել 18 տարեկանից բարձր բոլոր քաղաքացիները, վորոնք զրկված չեն ձայնի իրավունքից, սակայն վարձկոռապների շենքերում կարող են ապրել այն քաղաքացիները, վորոնք զրկված են ձայնի իրավունքից այն հաշվով, վոր ձայնազուրկների թիմն ամբողջ շենքում ապրողների $\frac{1}{3}$ -ից չպետք ե անցնի և նրանք ընտրովի մարմիններում չեն կարող մասնակցել ։ Կարձկոռապի անդամ չեն կարող լինել և նրանց շենքերում չեն կարող ապրել այն քաղաքացիները, վորոնք ըստ իրենց ունեցած լեկամտի, տարեկան 3000 ռուբլուց ավելի լեկամտահարկ են տալիս։

Բնակվարձկոռապ ընկերությունները նույնպես ոգուվում են մի շարք արտոնություններով. նրանք կազմակերպման որից պետք և անդամադրվեն բնակելուալ միության, մուծեն 25 ռուբլի մուտքի վճար և ընդունեն բնակելուալ միության ապագարատի դեկավարությունը։

Բնակվարձկոռապ ընկերության և անդամների պարտականությունն են՝

ա) Բարեխիղճ վերաբերմունք դեպի իրեն տրամադրված բնակարանային տարածությունը,

բ) Սեփական նախաձեռնությամբ կուլտ-կենցաղային հնարավորությունների ստեղծումը,

գ) Գույություն ունեցող դեկրետով սահմանված բնակարանավարձը լրիվ և ժամանակին մուծելը։

Բնակվարձկոռապի անդամ կարող են դառնալ նաև այն դեպում, յերբ մուծում են մեկ ռուբլի մուտքի վճար, 10 ռուբլի փակավճար ու մասնակցում են ընկերության բոլոր աշխատանքներին։ Ինչպես Բնակելուապի, նույնպես և բնակվարձկոռապի անդամ կա-

բող են դառնալ ընտանիքի բոլոր անդամները, մուծելով փայտվճարները, մուտքավճարները, շենքի պահպանման համար ընկերության միջոցներն ուժեղացնելու նպատակով։ Մակայն ընտանիքի միքանի անդամները լինելով բնակվարձկոոպի անդամ, չեն կարող ոգտվել արտօնություններով, ինչպես նորմայից ավել բնակարանային տարածություն ունենալու խնդիրներում, նույնպես և վարչության կազմի մեջ ընդունվելու խնդրում։

Բնակվարձկոոպը նպատակ դնելով բնակելի փոնդի պահպանման և ընկերության անդամների բնակարանային դրությունը դուրացնելու խնդիրը, վերև շեշտված որդաններից շենքերը վերցնելով, ստացվելիք բնակվարձի հիման վրա կազմում ե տարեկան նախահաշիվը, ըստ վորում տուաջին հերթին հայտարերվում ե շենքի պահպանման համար կատարվելիք վերանորոգումների և կոմմունալ-կազմակերպչական ու կուլտ-կենցազային ծախսերը։ Այդ ծախսերը կատարելու համար հաշվի լի առնվում տարեկան յեկամուտը բնակվարձից և զանազան աղբյուրներից։ Այդ լինկամուտը ներկայացնելով կոմմունալ բանկը, ցույց տալով տարեկան բնակվարձի չափը, արվելիք կապաշավարձը, կոմմունալ և այլ ծախսերը և մնացորդ գումարը. մնացած գումարի չափով կոմմունալ բանկից ստանում են վարկեր 1-ից մինչև 3 տարի ժամանակով, վորը հետագայում աստիճանաբար բնակվարձի միջոցով մարզում ե ընկերության կողմից։

Վորպեսզի ընկերությունները կարողանան վերցրած շենքերը բարվոք վիճակում պահել և կուլտ-կենցազային հնարավորություններ ստեղծել, անհրաժեշտ

հ՝ ուժեղացնել ընկերության յեկամուտների աղբյուրները, յեկամուտների աղբյուրներից ամենահիմնականը կազմում և ընակվարձը, մինչդեռ մեզ մոտ կան այնպիսի ապրողներ, վոր Յ-ից մինչև մեկ տարի ըընակվարձ չեն մուծել և զրկել են ընկերությանը շենքը կանոնավոր պահելու միջոցներից, ուրեմն վարչության անելիքը պետք է լինի կռվել ալդ իերևութների դեմ և պետական նոտարի միջոցով դանձել այդ գումարը: Ընկերության մյուս յեկամուտի աղբյուրները մուտքի վճարներն են, անդամավճարներն են և այլ պատահական յեկամուտներ: Պիտի ասել, վոր մեզ մոտ՝ Հայտատանում այդ դանձումները նույնպես գըտնը վում են վաստվիճակում, կան այնպիսի անդամներ, վորոնք մինչեւ այժմ անդամ մեկ ուուրի մուտքի վըճար չեն մուծել և համարվում են ընկերության անդամ, դա նույնպես անթուլատրելի յեւ, պետք է վարչություններն իրենց ուժերը լարեն վերացնելու այն բոլոր աղտորիկները, վորոնք մինչեւ որս գոլություն ունեն ընակվարձից և մուտքի ու փայտավճարներից:

Այդ բոլորը կատարելու համար վարձակալական ընկերությունները չեն ոգտագործում այն կազմակերպչական հսարավորությունները, վոր իրենց տըրքած եւ Ընկերությունն ընտրում եվ վարչություն, վարչությունները պարտավորվում են ալդ գործնական աշխատանքները կատարել:

Մեր վարձակալական ընկերությունների թերությունն այն ե, վոր նրանք մինչեւ այժմ, բառիս լայն իմաստով, չեն պատկերացնում ընկերության պարտականությունները և ֆունկցիաները, վորի հետևանքով կարծում են, թե ընակկոռապ միության վարչու-

թլունը հանդիսանում ե ցանցը կարգադրող կամ՝ նրա գործնական աշխատանքները կատարող մի որգան և վարձկոռապի անդամները հաճախ իրենց քնակարանի խնդիրներով դիմում են միության, պահանջներ են անում և այլն:

Վարձակալական ընկերությունները հանդիսանում են ինքնուրույն իրավական իրավունքներ վայելող առանձին կազմակերպություններ, վորոնք իրավունք ունեն գործարքներ կնքելու և ինքնուրույն կերպով տնօրինելու իրենց տրամադրության տակ գտնվող շենքի ամբողջ յելքն ու մուաքը: Ընկերության ընդհանուր ժողովը հանդիսանում է ընկերության բարձրագույն մարմինը, վորին հաշվետու ու պատասխանատու լին իրենց գործունելության մասին վարչությունը և ընկերուն կոմիսարիան:

Բոլոր սկզբունքային խնդիրները և ընդհանրապես վարչության գործունեյությունը քննվում, վորոշվում և հաստատվում ե ընկերության ընդհանուր ժողովում, ընկերության ընդհանուր ժողովը ներքին կարգապահության համար ունենում է ընդհանուր կանոնադրություն և այդ կանոնադրության հիման վրա հետևում ե շենքի սանիտարական վիճակին և բարեկարգման:

Բնակկոռապ միության ղեկավարությունը կալանում ե նրանում, վոր հետեւում ե ընկերության ընդհանուր ժողովներին ու վարչության նիստերին, ցուցմունքներ ե տալիս կազմակերպչական, տնտեսական, ֆինանսական, հաշվապահական, վիճակագրական տշխատանքները կանոնավոր տանելու համար և դա կատարվում ե պարբերաբար հրահանգիչների

ալցելության և գործնական ղեկավարության ու կենդանի կապի միջոցով։ Բնակչությունը հաշվի լեռնում յուրաքանչյուր ընկերության լեկամուտների չափն ու նրանց ծախսը, շենքի վերանորոգման համար ու միջնորդում և Կոմմունալ բանկին համապատասխան քանակությամբ վարկեր բաց անելու և այլն։ Բնակվարձկողների շենքերի վերանորոգման աշխատանքներն արագ, նպատակահարմար և միատեսակ կատարելու համար, վերանորոգման աշխատանքները տանում են կենտրոնացած ձևով։ Բնակչությունը մատակարարում և բնակվարձկողներին նաև շինանյութեր։

Վարձկողները համաձայն պետական բարձրագույն որդանների վորոշման, իրենց ընդհանուր յեկամուտների 50/0 տարեկան պետք և ծախսեն կուլտ-կենցաղակին կարիքների վրա, բայց քանի վոր ամեն մի ընկերություն իր տրամադրության տակ քիչ գումարներ ունենալով չի կարող նպատակահարմար ծախսել, ուստի բնակչությունն այդ բոլոր գումարները կենտրոնացնում և և դա հնարավորություն և տվել 1929 թվի ընթացքում այդ գումարները ծախսել ավելի նպատակահարմար կերպով։ այս տարի պահվել են 3 մանկ. հրապարակներ և պահպան և վարձկողների համար 4 մանկապարտեզներ, կատարվել են զանազան կուլտ-կենցաղային աշխատանքներ։

7. Ի՞նչ ՀԱՍՏՐԱԿԱԾՈՆ ՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՆՅԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԻ ՈՒՆԻ ՎԵՐՉԿՈՂՊԴՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԶԵՎՀ

Մենք նախաբանում ասացինք, վոր ալժմս աշխատավորության կենսական խնդիրներից մեկը բնա-

կարանային դրության բարելավումն և և խորհրդայշացումից հետո մունիցիպալ շենքերը տրամադրելով տեղական իշխանություններին և վերջինիս տալով ոգտագործելու ազգարնակչությանն, չեն ապահովում լիղած բնակարանային ֆոնդի կանոնավոր պահպանումը և այդ պատճառով որըսաորեւ քանդվում ու նվազում ե բնակարանային տարածությունը և վորպիսպի յեղած բնակարանային ֆոնդը վոչ միայն պահպանվի, այլ և հիմնովին վերականգնվի, անհրաժեշտ և այդ շենքերում ապրող ազգարնակչության հսկողությանը հանձնել յեղած ֆոնդը։ Այդ և պատճառը, վոր 1929 թ. սկզբներին կուսակցական և խորհրդական որդանները ընդուածածելով բնակկոռպերացիայի զարգացման, համաձայնեցին յեղած ֆոնդը հանձնել բնակկոռպերացիային, կազմակերպելով յեղած շենքերում վարձակալական ընկերություններ։ Խնչվես հետագալում կտեսնենք, առաջին տարվա ընթացքում վարձակալական ընկերությունները թեև ունեն խոշոր թերություններ, այնուամենաւիվ ինչպես բնակկոռպերացիայի զարգացման, նույնպես և շենքերի պահպանման խնդրում հսկալական դրական արդյունքներ են տվել։

8. ՀԱՄԲԳԱՎԱԶՈՒՆ ԲՆԱԳԹԻՆԿՈՋՊ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԵՐՆ ՈՒ ՍԿՐՈՒՆՑՆԵՐԸ

Բնակկոռպերացիայի 3-րդ տիպի ընկերությունը համարվում ե համաքաղաքային բնակչին կոռպ ընկերություն, վորը կազմակերպվում ե ձայնի իրավունքունեցող բոլոր քաղաքացիներից (տնայնադորձներ, հողագործներ և այլ), վորոնք ունենալով նույն կազ-

մակերպչական ձևերը, ինչպես և բնակչին կոռագները, միայն այն տարբերությունն ունեն, վոր սրանք վարեկեր ստանալու համար, պետք ե ունենան վոչ սղակասքան 30 % պահանջվելիք վարկերի և մնացած աշխատանքները տանում են այնպես, ինչպես բնակվարձկոռագներն ու բնակչին կոռագները։ Թեև Հայաստանում համաքաղաքային Բնակչին կոռագ ընկերություններ մինչև այժմս լիրկուսն են «Գաղութ» և «Արաքս» ընկերությունները, ուսկայն ալդ ընկերությունները շոշափելի սեփական միջոցներ չունենալով դեռ աչքառու աշխատանքներ չեն կատարել, միայն «Դաղութ» ընկերությունն է, վոր մի շենք ե կառուցել, իսկ կուլտութական և այլ աշխատանքներ չեն տարվել։

9. ԲՆԱԿԱՌՈՊԵՐԱՑԻԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Բնակարանային կոռագերացիան Հայաստանում կազմակերպվել ե կոռագերատիվ մլուս սիստեմներից ավելի ուշ, նրա սկզբը պետք ե ընդունել 1926 թ.։ Յերկու տարի ընակկոռագերացիան ապրել ե կազմակերպչական և ֆինանսական ամենածանր պայմաններում և այդ պատճառով չի կարողացել և չեր ել կարող լիրկու տարվա իր գոյության ընթացքում և գործնական կուլտուրական ու կազմակերպչական աշխատանքներ ծավալել այնպես, ինչպիսին տարվում ե այժմ։ Նրա ուշադրության կենտրոնն յեղել ե միայն մունիցիպալ շենքերում վարձակալական ընկերությունների կազմակերպումը և հնարավորության սահմաններում նոր բնակարանային շինարարությունը։ Բացակայել ե խորհրդային, պրոֆմիութենական և այլ կազմակերպությունների ոժանդակությունը։

Բնակարանալին կոռպերացիան այդ ժամանակ
հնարավորություն չուներ մասսալական աշխատանք-
ներ կատարելու և շինարարությունը ծավալելու,
վորովճետե չուներ պահանջվող քանակությամբ սե-
փական միջոցներ և վարկեր, իսկ պետական ռե-
սուրսները հնարավոր չեն ներդրել շինարարության
մեջ, վորպիսին կատարվում ե այժմ. հետեապես
բնակկոռպերացիան չունենալով նոր շինարարություն,
չեր կարող գրավել աշխատավոր զանգվածների ռւշա-
ղրությունը: Մինչև 1928 թվիը բնակկոռպ միությունն
ուժերի գերագույն լարվածությամբ կարողացել է
կազմակերպել մի քանի վարձակալական և բնակչին-
կոռպ ընկերություններ, ըստ վորում կառուցվել են
միայն յերեք նոր շենքեր: 1928 թվից սկսած՝ նկատ-
վում է հասարակական ու խորհրդային որգանների
բնակկոռպերացիալին ոժանդակելու ու զարգացնելու
գործոն մասնակցությունը: Ուժեղ բեկում և առաջա-
նում բնակկոռպերացիալի աշխատանքների մեջ այն
իմաստով, վոր տեղական խորհրդային որդանները,
նույնիսկ արդյունաբերական որդանները մասսայա-
կանորեն իրենց տրամադրության տակ յեղած վոչ
միայն հին, այլ և նոր շենքերը տրամադրում են բը-
նակկոռպերացիալին վարձակալական ընկերություն-
ներ կազմելու համար և այդպիսով 1929 թ. մարտից
սկսած Յերևանի և Լենինականի Քաղխորհուրդները
Յերևանում հանձնեցին Բնակկոռպերացիալին 55 մու-
նիցիպալ և 13 նոր շենքեր, Լենինականում 15 շենքեր:
Այդպիսով 1929 թվի ընթացքում ուժեղ չափով զար-
գացավ և դրա հետ միասին մանր շենքերում յեղած
ընկերությունները ձուլվեցին և դարձան խոշորացած

ընկերություններ, ինչպես ցույց են տալիս հետևյալ
թվական տվյալները:

Տերեվանում 1927 թվին	1928 թվին.
Բնաշինկոռպաններ	49
Անդամների թիվը	1633
Բնակելի տարածություն նոր կա-	
ռուցված շենք. 2597 քառ. մետր	1879 քառ. մետր
Կառուցված շենքերի թիվը 8	6 շենք
Անդամների միջոցներ 43.400 ռ.	58.800 ռուբլի
Կենտրոնական կառավագանք ստացած	
վարկեր 144.000 ռ.	149.500 ռուբլի
Անդամների միջին փայտավճարը	
ամսեկան 3 ռ. 50 կ.	6 ռ. 60 կոպ.
Երնարարության արժեքը 170 ռ.	165 ռուբլի
Տերեվանում 29 թ. Նախառեսպում և 30 թ. համար	
Բնակենկոռպաններ	25
Անդամների թիվը	2.016
Բնակելի տարած. նոր կառուցված	
շենքերում . 8.573 քառ. մետր 11.159 քառ. մետր	
Կառուցված շենքերի թիվ . 6	12
Անդամների միջոցներ	94.400 . 170.000 ռուբլի
Կենտրոնական կառավագանք ստացած	
վարկեր 195.500 ռ. 300 000 ռուբլի	
Երբքաղխորհրդի	
վարկեր 594.500 ռ. 700.000 ռուբլի	
Անդամների միջին փայտավճարը	
ամսեկան 11 ռ. 20 կ. 17.70 ռ.	
Երնարարության	
արժեքը 160 ռ. 155 ռ.	

Այս թվական տվյալներից լեռնում ե, վոր միայն Յերևանում 1927 թ. մինչև 1929 թ. ներառյալ կառուցված ե Բնակչողութերացիալի միջոցով 1.079.600 ռ. բնակելի տարածություն։ Ցեղե հաշվենք նաև 30 թվի նախատեսված գումարը 1.157.250 ռ., չհաշված մինչև վեց հարյուր հազար ոռուրի կուլտ-կենցաղալին զանազան որդաններից տրվող գումարները և լիթե այս թիվը ավելացնենք նախկին ներգրաված գումարներին, կոուղերացիան 4 տարվա ընթացքում բնակարանայի շինարարության վրա դրած կլինի 2.853.250 ոռուրի, վորից սեփական միջոցները կազմում են 353.850 ոռուրի։ Այդ գումարին կարելի ե կառուցել 120 սենյակ, մինչ դեռ մենք դիտենք, վոր բնակարանային դեկրետով ողտվում են մի շարք արտօնություններով, այնուամենայնիվ ուժ տարվա ընթացքում բնակարանի նոր շինարարության վրա այսքան գումար չեն ծախսել։ Այսպիսով բնակկողերացիան ներգրավելով լայն մասսաներին, շոշափելի ողնություն ե ցույց տալիս ժողովրդական տնտեսության բնակարանային շինարարության գործին։ Սակայն բնակկողերացիայի նպատակը միայն այն չե, վոր մասսաները ֆինանսական մասնակցություն ցույց տան բնակարանային տնտեսության զարգացման գործում, նրա նպատակն ե աշխուժացնել մասսաների կոնտրոլն ու հսկողությունը ուժեղացնել տնտեսական այդ ճյուղի վրա, միաժամանակ մտցնելով կոլլեկտիվ ոգտագործման ու կուլտ-կենցաղալին պայմանները ստեղծելու նոր ձևեր բնակարանային տնտեսության մեջ։ Փաստերը ցույց են տալիս, վոր նույնիսկ նրանք վորոնք տարիներով բնակվարձ չենքին վճարել, այժմ

նույն շենքերում կոռապերացման յենթարկվելուց հետո, փոխարեն նման պահանջներ դնելու իրենց սեփական միջոցներով կատարում են այդ բոլոր աշխատանքները, առանց վորևե կոպեկ ծախսելու։ Այդ բավական չե, դրա հետ միասին սեփական նախաձեռնությամբ և ինքնահարկման միջոցով կազմակերպում են մանկական հրապարակներ, պարտեզներ, մսուրներ, լվացքատներ, չորանոցներ, ընդհանուր խոհանոցներ, լուղարաններ, կար ու ձեի արհեստանոցներ և այլն։ Այսպիսով ընակարանային կոռապերացիան վոչ միայն ոգտակար և այդ տեսակետից, վոր կարող ե ստեղծել սեփական ներդրումներով աշխատավոր զանգվածների համար ընակարանալին նորմալ պահմաններ, ալլ և ստեղծում և նոր կենցաղի հնարավորություններ և սպահովում և պետական զումարների վերադարձը։ Կարենորն այն է, վոր մինչև այժմս գործկոմների և տեղական արդյունաբերական որգանների կողմից կառուցված շենքերի ստացված գումարների վերադարձը ապահովված չեր, քանի վոր այդ որգանները վարկային կարգով պետությունից ստացված գումարները բնակարանային շինարարության մեջ դնելով շենքերից ստանում ելին միայն ընակվարձ, իսկ ընակվարձը բավական հեռու յե շենքի արժեքը ծածկելուց։ Այդպիսով այդ որգանները ստացած վարկային ամբողջ գումարներից ստացված ժամանակամիջոցի ընթացքում, կարող ելին վերադարձնել միայն $60-70\%$ -ը իսկ մնացած գումարը չեր վերադարձվում, դա խախտում եր շինարարության ծրագրային աշխատանքը։ Մինչդեռ կոռապերացիայի գծով ինչպես նոր շինարարության համար արվող լերկարատե վարկերը,

նույնպես և հին շենքերի վերանորոգման կարճատե
վարկերը վճարվում են, իոկ դա իր հերթին խոշոր
չափով նպաստում ե մեր շինարարութլանը:

Բնակչինարարության թերություններից մեկը
ողիտի համարել ան, վոր մինչև այժմս կառուցված
շենքերում դեռ չի կիրառվում շենքերի արժեքի իջեց-
ման հիման վրա գանձվելիք բնակվարձը: Կամ ընկե-
րություններ, վորոնք գանձումներ կատարում են ա-
ռանց հիշալ նպատակը աչքի առաջ ունենալու. դա
բացարձում ե նրանով, վոր մինչ այժմս կառուցվող
շենքերի կատարողական նախահաշիմսերը չեն լեզել
և զրկել են ընկերությանը շենքի ճիշտ արժեքն ու-
նենալու և գանձումները կանոնավորելու, ինչպես Հա-
յաստանում, նույնպես և Միության մասշտաբով դեռ
մինչև այժմս վերջնականապես չի վորոշվել շենքերի
արժեքի շիջեցման և շահագործման ծախսերի չափա-
վորման խնդիրը և այդ պատճառով միայն շենքի ար-
ժեքի գանձումը չե, վոր կաղում ե, այլ և անորոշ
դրության մեջ ե նաև շենքերի վերանորոգման ու շա-
հագործման աշխատանքը: Այդ ուղղությամբ միու-
թյան կողմից միջոցներ են գործադրվում մոտ ապա-
գայում բնակվարձի աննլուիտեային սիստեմի կիրա-
ռումը:

10. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿԱՌՎԵՐԸՑԻ ՑՈՒՑԻ ԳՐԱԿԹՑԱՆՆՆ

Բնակարանային կոռպերացիան իր գոլության
ընթացքում ավելի մեծ նվաճումներ ե կատարել մու-
նիցիպալ ֆոնդի պահպանման և վարձակալական ըն-
կերություններ կազմակերպելու գործում, քան շինա-
րարական: Վարձակալական ընկերությունները թեկ-

սկզբնական շրջանում, ինչպես ասացինք առաջեն լեկել տարերախորեն և անկազմակերպ ձևով, սակայն հետագայում նրանք ավելի նորմալ հունի մեջ մտնելով աստիճանաբար զարդանում են ու կոռպերացման յենթարկվում գոյություն ունեցող մունիցիպալ շենքերում։ Նրանց զարդացման ամենայեռանդուն շրջան պետք է համարել 1929 թ. սկզբից. մինչ այդ կոռպերացված է Յերևանում լեղած շենքերի 17-18 տոկոսը լենինականում միայն 10% -ը, իսկ 1929 թ. ընթացքում այդ լերկու քաղաքներում կոռպերացման լենթարկվեց մինչև 80% -ը։ Թեև դա բավարար պետք է համարել այսուամենայնիվ մինչև 1931 թիվը պետք է այդ լերկու քաքաքներում այդ տոկոսը պիտի հասցընել 100% -ի։ Բնակարանային կոռպերացիան ունի հետեւալ պատկիրը.

1927 թվան

Ընկերությունների թիվը	36	լեն.	5	Ընկերության 20 լեն.	5
Անդամների թիվը	321		> 70	1,337	> 300
Շենքերի թիվը	20		> 5	89	> 14
Բնակ. տարածութ. 6,800 ք. մ. > 600 ք. մ. 33,703					> 12,000
Տեղած շենքերի արժեքը	180,000 ռ.	> 6,000 ռ.	2,533,000		> —
Տարեկան յեկա-					
մուտք	31,680 ռ.	> 50,000 ռ.	175,000		> 40,000
Տարեկան վերանորոգ.					
ծախսը	29,600	> 50,00 ռ.	175,000		> 15,000
Կուլտ-կենցագ. ֆոնդը			4,900		> 850
Տարեկան տնտեմավճար					
մեկ մարդի	5 ռ.	լեն.	3 ռ.	8 ռ.	40
					> —

1926 թիվը

Յախատեսնկում և 1980 թիվը

Հնկերութ. թիվը 30 լենինական	4	21 լեն.	2
Հնկերութ. անդ. թիվ 499 լեն.	170	4,958,	» 500
Շենքերի թիվը 30 լենինական	10	115	», 20
Բնակելի տարածություն 12,322 ք. մ.			
լեն. 4,300 ք. մ.		37,300	» 15,000
Տարեկան յեկամուտը 44,200 ռ.			
լենինական 12,000 ռ.		230,500	» 60,000
Թեղած շենքերի արժեքը 492,000 ռ.			
լենինական 125,000 ռ.		2,880,000	» 90,000
Տարեկան վերանոգում. ծախսերը			
39,000 ռ. լեն. 9,000 ռ.		230,500	» 60,000
Կուլտ-կենցաղային ֆոնդը		11,525	» 3,000
Տարեկան անդամավճար մեկ հոգուն			
5 ռ. 40 կ.	.	8 ռ. 90 կ.	»

Այս թվական տվյալները ցույց են տալիս, թե ինչպես աստիճանաբար զարգանում է կոռպերացիալի վարձակալական ընկերությունների թիվը մեզանում: Հիմնականն այն ե, վոր լերկու քաղաքների մունիցիւպալ շենքերի 80 % կոռպերացված են: Մի քանի որգանների թվական տվյալներով այդ յերկու քաղաքներում բնակվածը մի քառ. մետրին ըստ զեկրետի, միջին հաշվով 28 կ. ե, մինչդեռ մեկ քառ. մետրի վրա ծախս ե պահանջվում մինչեւ 32 կ.: Այսպիսով ամսական ծախսը ավելի ե կատարում, քան ստացվող բնակվարձը՝ 4 կոպեկ: Ցեղե ընդհանուր տարածությունը հաշվենք ամսեկան ընկնում և 746 ռ., տարեկան 9,052 ռ. Այս գումարը չի ծածկում շենքերի փաստական ծախսերը: Բացի այդ քաղխորհուրդներին վորպես կապալավարձ տրվում ե միջին հաշվով մեկ քառ. մետրին ամսեկան 07 կ., վորը կազմում է տարեկան

ընդհանուր տարածության համար 31,210 ռ. ավելացրված սրա վրա ծախսերից պակասող 9,200 ռ. ընդհանուր 40,260 ռ., Դրանից բացի ընդհանուր լեկամուտի 05% ը պետք է ծախսվի կուլտ-կենցաղային կարիքների վրա, վորը վերջին տարվա համար, ըստ կոնտրոլ թվերի կազմում և 11,525 ռ., Յեթե ավելացնենք վերոհիշյալ գումարին կունենանք ընդհանուր 57,551 ռ., Այսպիսով հաշված տմբողջ գումարը, հիշալ ծախսերը դուրս գալուց հետո պակասում և անհրաժեշտ պահպանման գումարից 51,785 ռ., Զնայած շենքերի պահպանման միջոցների այդպիսի խոշոր դեֆիցիտի, այնուամենայնիվ ընթացիկ տարին ապացուցեց, վոր շենքերի հիմնական վերանորոգումներն ընթանում են նորմալ կարգով, այժմ կոռպերացումից հետո ընկերությունների կողմից խիստ ստուգման յենթարկվեց լուրաքանչյուր բնակչի բնակելի տարածությունը և փաստացի վճարվելիք բնակվարձը ու պարզվեց, վոր շատ հաճախ ընակվողները վճարում ելին դեկրետով պահանջվելիք բնակվարձը 50% ի չափով: Այդ բոլորը կարգավորելուց հետո բավական մեծացավ շենքերի յեկամուտների քանակը: Յերկրորդ հանգամանքն այն է, վոր բնակիչները մինչև այժմ բացի այն վոր կտնունավոր կերպով չելին վճարում բնակվարձը, այլ—և դեկրետով սահմանված պարտավորությունները չելին կատարում, ինչպիսին եւ ընթացիկ վերանորոգումները իրենց հաշվին կատարելը, կոմունալ ծախսերին մասնակցել և այլն: Իսկ կոռպերացումից հետո ընկերություններն իրենց նախաձեռնությամբ՝ ներքին կարգով կատարում են և կատարել են տալիս ամեն մի բնակչին պահանջվող անհրաժեշտ

Ընթացիկ վերանորոգումները։ Յերրորդ պատճառն
այն է, վոր Բնակկողակ միության կողմից կազմակերպ-
ված սանիտարական շաբաթվա ընթացքում Յերևանի
բնակվարձկողակ ընկերությունները կազմակերպված
հասարակական աշխատանքների միջոցով բավական
շոշափելի արժեք ունեցող աշխատանքներ կատարե-
ցին։ Այս ձեռնարկումները ոժանդակեցին բարվոքել
շենքերի դրությունը, կրճատեցին նաև այն վարչա-
տնտեսական ծախսերը, վոր կատարվում եր քաղյուր-
հրդի կողմից ապարատի պահպանման միջոցով։ Յեզ
ապարատի փոխարեն ալժմ այդ պարտականություն-
ները կատարվում են ընկերությունների վարչու-
թյունների միջոցով առանց վարձատրման։

Բացի այդ առավելությունները պիտի արձանա-
գրել, վոր բնակարանային տնտեսության ռացիոնալ
ուղագործումը հնարավորություն և տալիս իրազոր-
ծել կուսակցության և պետության դիրեկտիվները կուլտ
կենցաղային աշխատանքների ասպարիզում։

Մինչ կոռազերացումը կենինականի և Յերևանի
բնակարանային տնտեսության շահագործման գումար-
ներից և վոչ մի կոպեկ չեր ծախսվել կուլտ-կենցաղա-
յին նպատակների վրա, իսկ կոռազերացումից հետո,
ինչպես վերևում ասացինք 50% հատկացվում ե այդ
նպատակին։ Բացի այդ բնակկողակ միությունները ի-
րենց միջոցներից վորոշ մասնահանում են կտարել
կուլտ կենցաղային կարիքների համար և ահա այդ
գումարներից ընթացիկ տարվա ընթացքում պահպել
են Յերևանում Յ մանկահրապարակներ, կենինակա-
նում մեկ, Յերևանում կառուցվում են յերկու մանկա-
պարտեզների շենքեր, մեկ մսուր և յերկու մանկա-

պարտեղի-Լենինականում։ Այժմ Բնակչությունը նախապատրաստական աշխատանքներ ե կատարում կազմակերպելու մեկ կար ու ձեմ արհեստանոց, մի խոհանոց, մի լվացքատուն վարձակալական ընկերությունների համար (թված կուլտ ձեռնարկները վերաբերվում են միայն վարձակալական ընկերություններին):

Բնական ե, վոր մենք թերություններ ունենք. այդ թերություններից հիմնականն այն ե, վոր ընկերությունները տեղերում դեռ լիովին չեն ընդգրկել իրենց աշխատանքը, վորովհետև ընտրությունների ընթացքում տարվում եր ընկերությունների խոշորացում և այդ պատճառով միացվող շենքերի բնակիչները մեկը մլուսին լավ չճանաչելով, ընտրել են վարչությունների կազմում այնպիսիններին, վորոնք գիտակցարար, թե անգիտակցարար, դուցե և որդիկտիվ պայմանների պատճառով իվիճակի չեն կատարել այն բոլոր պարագանությունները, վորը պահանջվում ե նրանցից և այդ պատճառով, ինչպես ընկերությունների ընդհանուր նիստերին, նույնպես և վարչությունների նիստերին չեն մասնակցել, Ընկերություններին վերաբերվող խնդիրները լայնորեն չեն քննվել նիստերում։ Աշքաթող են արված ինչպես ներքին կանոնադրության, նույնպես և կանոնադրության և բարձր որդանների վորոշումների կիրառումը։ Վերանորոգման աշխատանքները տարվել են գրեթե վարչությունների նախագահների միանձնյա կարգադրությամբ ու դեկավարությամբ և վորը տեղիք ե տվել լուրջ դժգոհությունների։ Յերկրորդ թերությունն այն ե, վոր գանձումներն ու հաշվետարությունը ու վիճակագրական աշխատանքները տարվել են վոչ բա-


վարար չափով։ Յերբորդ թերությունն այն և վոր ազատվող բնակֆոնդի ոգտագործումն չի կատարվել ընկերության ընդհանուր ժողովի վորոշմամբ, շատ դիպքերում տրամադրվել են վարչությունների կամ նախագահների կողմից։ Չորրորդ թերությունն այն և, վոր վարչություններն անհասկանալի պատճառներով խուսափում են նոր անդամներ ընդունելուց և ազատվող բնակտրանները ընդարձակում են իրենց անդամների համար։ Դա ինարկե անհրաժեշտ և բղխում ե կոռպերատիվ սկզբունքներից ու նպատակներից, սակայն ալդ ձևի կիրառումով աչքաթող և արգում այն հանգամանքը, վոր Յերեանում և Լենինականում աղգարնակչությունն ապրում ե բնակարանային վատ պայմաններում։ Ալդ մոմենտին զբաղվել միայն ներքին ընդարձակումներով ու աչքաթող անել հսկայական քանակությամբ բնակարանազուրկ բանվոր ու ծառալողներին, վորոնք ապրում են հատ հաճախ նըկուղներում, միջանցքներում։ միանգամայն անթույլատրելի են կան փաստեր, վոր բնակվարձկոռպներում ապրողներից, այնպիսի ընտանիքներ կան, վորոնց շնչին ընկնում ե մինչև 20 քառ. մետր բնակելի տարածություն, այն ժամանակ, յերբ վոչ կոռպերատիվ անդամ, նույնպիս բանվոր 4 շնչով ապրում ե 7 քառ. մետրի վրա։ Ալս տենդենցը պետք և վերացնել բնակվարձկոռպ ընկերությունների միջից։ Նրանք պետք ե շարունակեն ընդունել նոր անդամներ և ազատվող բնակարանները տրվեն թեկուղ նոր անդամներին։

Ստորին ցանցի՝ բացերի հետ կան վորոշ բացեր նաև Բնակկոռպ միության մեջ։ Առաջինն այն և, վոր կարծես թե միությունը իր աշխատանքները կենտրո-

նացրել և Յերեանում, մասամբ և Լենինականում։ Դա
բացատրվում է նրանով, վոր Յերեանը համեմատած
մուս քաղաքներին ավելի խիստ կարիքի մեջ ե, յեր-
կըրդը, վոր սեփական միջոցները Յերեանում ավելի
մեծ են քան այլ քաղաքներում և բացի այդ մեռւս գա-
վառների տեղական կազմակերպությունները դեռ չեն
արձանադրել ու գործոն մասնակցություն չեն հանդես
բերել կոռպերատիվ ալդ ճյուղի ղարգացման ասպարե-
զում, բացի Ղարաքիլիսալից, վորաեղ վերջինս տեղի
նախաձեռնությամբ կազմակերպել և մի ընկերություն։
Յերկըրդ բացն այն ե, վոր կոռպերացիայի մեջ
ընդգրկվող անդամների սեփական միջոցների խնդրում
մինչև այժմս տեղի յեն ունեցել սկզբունքային շեղում-
ներ, ինչպես որինակ անդամները հաճախ նոր շենքե-
րում ստանում են բնակարան, նույնիսկ 5 ո. մուծե-
լով, փոխարեն 600—900 ո. վճարելու կամ հակառակը՝
կազմակերպման որից վոչինչ չեն մուծում մինչև շեն-
քի կառուցումը և միանգամից մուծում են պահանջ-
վածից ավելի գումար, փոխարինաբար վերցնելով հիմ-
նարկությունից։ Իհարկե նման դեպքեր քիչ են, բայց
և այնպես դա կոռպերատիվ սկզբունքի խախտում ե,
վորովհետեւ կոռպերացիան ոգտակար և այն տեսակե-
տից վոր անհատական գումարներ են ներդրվում շի-
նարարության մեջ, իսկ յեթե այսպես շարունակվելու
լինի, ստացվում ե այն, վոր կառուցվող շենքերի վրա
ամբողջապես ծախսվում են պետական գումարներ։
Այդ յերեսությը կանխելու համար արդեն միության
կողմից նախաձեռնված եղիֆֆերենցիալ փայակուտա-
կումների սիստեմը, վորը հավանական ե լեկող շին
սեղունում կիրագործվի։ Վերջին բացն այն ե, վոր

ընդհանրապես բնակլինարարության դարգացման
 գործում արհմիությունները և տեղական դանազան
 կազմակերպությունները դեռ թույլ են մասնակցում:
 Որենսդրությամբ բնակարանային շինարարության
 զարգացմանը նպաստելու համար, կան մի շարք կե-
 տեր, վորոնք աչքաթող են արված տեղական որդան-
 ների կողմից. այդ կետերից մեկն այն ե, վոր առևտրա-
 կան ու տնտ. որդանները հատկացնում են իրենց ողուա-
 ների վորոշ տոկոսը վորպես բանվորների ու ծառայող-
 ների կենցաղի բարելավման ֆոնդ և ալդ ֆոնդը պար-
 տավոր են ոգտագործել բնակարանային շինարարու-
 թյան վրա: Սակայն մինչև ալժմ փաստերը ցուց են
 տալիս, վոր ալդ գումարները վորոշ որդանները նշա-
 նակված նպատակի համար չեն ծառայեցնում: Նույնը
 կատարվում ե և արդյունաբերական հիմնարկների
 կողմից: Անհրաժեշտ ե պրոֆ և կուս որդանների ու-
 շադրությունը հրավիրել ալդ խնդրի վրա: Ընտրու-
 թյունների ընթացքում ընկերությունների կազմի մեջ
 քիչ բանվորներ ու բանվորուհիներ են ընդգրկված:
 Գալիք ընտրողական ընտրության ընթացքում առանձ-
 նահատուկ ուշադրություն պիտի դարձնել ալդ խընդ-
 րին և բանվորներին, կանանց և կոմիերիտականներին:
 ընդգրկել կոռոպերացիայի ղեկավար կազմի մեջ: Ալժմո-
 ւուրաքանչյուր բանվորի ու ծառայողի հիմնական
 նպատակը պետք է լինի, բացի այն, վոր ինքը ան-
 պալմանորեն պետք ե բնակլիկոպերացիալի անդամ
 լինի, այլ և կոռպերացման պետք ե լինթարկի իր
 շրջապատը, ալնքան, վորքան կոռոպերացիայի սխտե-
 մի մեջ իր պատմությամբ ամենայերիտասարդը բնակ-
 լիկոպերացիան ե և նա բավական յետ ե մնացել կոռ-

պերատիվ մյուս սիստեմներից։ Անհրաժեշտ ե մասսա-
լական աշխատանքներ տանել աշխատավորական
զանդակածների մեջ, համախմբելով վողջ աշխատավո-
րությունն արդյունաբերական կենտրոններում և մո-
բիլիզացիայի լինթարկելով բոլոր հնարավոր միջոց-
ները բնակարանային շինարարությունը կենտրոնաց-
նելով բնակելուպերացիալում։ Այս ճանապարհով մի-
միայն հնարավոր կլինի մեղմացնել բնակարանային
այն ճգնաժամը, վոր գոլություն ունի Խորհրդային
Հայաստանում։





ԳԱԱ Հիմնարար Գիտ. գրադ.



FL0039175

(084)

ԳԻՆՅ 7 ԿՈՊ. Մ. (1¹/₄ մամուլ)

A 1
4296



T. Нерсесян

Краткое разяснение основных задач
жилкооперации.

Госиздат ССР Армении
Эревань—1930